ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
Տնօրեն .....
«.....».....2023թ.

ՆՈՐԱԿԵՐՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊՈՍԱԿ

ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

2023-2024 ուսումնական տարի

XII դասարան

Վարդանյան Ռուզաննա

Կրթա-դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)2023-2024 ուստարում 12-րդ դասարանը բաղկացած է 13 աշակերտներից, որից՝ 6-ը տղա,7-ը աղջիկ:Ընդհանուր առմամբ աշակերտները ունեն միջինից բարձր առաջադիմություն: Դասարանում բոլոր աշակերտները համախմբված են, ընկերասեր և պարտաճանաչ: Երեխաները հաճախում են դպրոց ճիշտ ժամանակին և ցուցաբերում են ակտիվություն: Դասարանում չկան դժվար դաստիարակվող աշակերտներ: Ուսուցիչների և դասղեկի կողմից հետևողական աշխատանքներ են տարվում, որպեսզի բարձրացնեն դասարանի ուսման առաջադիմությունը:

.Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում. Դաստիարակությունը դպրոցական կրթության կարևոր բաղադրիչ է, որի հիմնական խնդիրներն են՝ սովորողների մեջ քաղաքացիական պատասխանատվության և իրավական գիտակցության ձևավորումը, հոգևոր դասատիարակությունը, նախաձեռ նության, ինքնուրույնության, հանդուրժողականության խթանումը, ինչպես նաև հասարակության մեջ ինտեգրվելուն նպաստելը: Ուսումնա-դաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Իրականացնել դասարանի համար սահմանված գործավարություն էլ. գրանցամատյանում:

Բացահայտել և գնահատել ԿԱՊԿՈՒ սովորողներին՝ համագործակցելով ՄԿԱ գծով փոխտնօրենի, հատուկ մանկավարժի, ուսուցչի օգնականների և ՏՄԱԿ-ի հետ:

Տարեվերջյան հաշվետվության մեջ ներկայացնել սովորողների առաջադիմության, ինչպես նաև հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն տնօրինությանը:

Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը,պահպանել ծնող-աշակերտ-դպրոց կապը: Աշխատանքներ տանել ծնող կոմիտեի անդամների հետ: Դասից և վարքից անբավարար աշակերտների հետ աշխատել առանձին,որպեսզի շտկել այդ թուլությունները:

ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

. Հոգևոր դաստիարակություն:Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստրարակության ձևավորմանը: Անցկացնել զրույցներ հոգևոր տոների մասին, դասարանական միջոցառումներ:

Գեղագիտական դաստիարակություն: Գեղեցիկի հետ առնչվելու և հոգևոր կուլտուրայով զբաղվելու իրավունքը դաստիարակության կարևորագույն տարրերից մեկն է: Գեղագիտական դաստիարակության համակարգը ընդգրկում է սովորողի ուսումնական գործունեությունը, արտադասարանային և արտադպոցական աշխատանքները, գեղագիտական դաստիարակությունն ընտանիքում, ինքնադաստիարակությունը: Գեղագիտական ձևերն են՝ զրույց, դասախոսություն, պոեզիայի երեկո, հանդիպումներ:Աշակերտների մոտ ձևավորել էսթետիկական կուլտուրա:

Ռազմահայրենասիրական դաստիարակություն: Ռազմահայրենասիրական դաստրարակությունը բազմաշերտ, նպատակաուղղված, անընդմեջ, համակարգված գործընթաց է՝ ուղղված մատաղ սերնդի հայրենասիրական, քաղաքացիական պարտքի, հայրենիքին նվիրվածության և հավատարմության դաստիարակմանը: Հայրենասիրության կրթության վերաբերյալ կազմակերպել քննարկումներ: Կազմակերպել հանդիպումներ և զրույցներ համագործակցող զորամասի սպաների հետ:

Ֆիզիկական դաստիարակություն: Ֆիզիկական դաստրարակությունը բնակչության առողջության ամրապնդմանը, աշխատունակության բարձրացմանը և երկարակեցությանը, ֆիզիկապես կոփված և բարոյապես կայուն սերնդի ձևավորմանն ուղղված կազմակերպված գործընթաց է: Ֆիզիկական դաստրարակության առանցքը «առողջ հոգի առողջ մարմնում» դրույթն է, իսկ դրա գրավականներն են՝ զբոսանքները, շրջագայությունները, ֆիզիկական աշխատանքը, մարզումը, վարժություններն ու խաղերը:

Աշխատանքային դաստիարակություն: Աշխատանքային դաստիարակությունը բազ մակողմանի գործընթաց է ուղղված երեխայի մոտ աշխատանքի նկատմամբ հայացքներ, գաղափարներ, աշխատասիրություն դաստիարակելուն, աշխատանքային կարողություններ և հմտություններ ձևավորելուն և զարգացնելուն: Աշխատանքային դաստիարակության խնդիրներն են երեխայի մոտ աշխատանքի նկատմամբ բարեխիղճ վերաբերմունքի, նյու թական արժեքների պահպանման, աշխատելու պահանջ և ձգտում ունենալու դաստիա րակումը: Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը, աշխատավոր մարդը:

Բնապահպանական դաստիարակություն: Էկոլոգիական դաստիարակությունը շրջակա միջավայրի նկատմամբ բարոյագիտական վերաբերմունքի մակարդակի բարձ րացմանը նպատակաուղղված, անընդմեջ, համակարգված գործընթաց է, որը հնարավո րություն է

տալիս ձեռք բերել գիտելիքներ և կարողություններ, դրսևորել բարոյական վարքագիծ բնության հետ փոխներգործության ընթացքում: Պետք է կազմակերպել
էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ, որոնք առկա են իրենց շրջապատում և այդ խնդիրը գլոբալ է:

Դպրոց-ընտանիք կապը: Հանրակրթական դպրոցի և ծնողների միջև ամրապնդել կապը մանկավարժական աշխատանքների և ծնողների կողմից երեխաների դաստիարակության հարցերում միասնական պահանջներ ձևավորելով: Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն, որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց-ընտանիք կապը, որպեսզի աշակերտները ավելի լավ սովորեն: Հաճախակի հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը, պահպանել ծնող-աշակերտ-դպրոց կապը: Աշխատանքներ տանել ծնողկոմիտեի անդամների հետ:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը

	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող
1	«Ինչպես վարվել արտակարգ իրավիճակներում» թեմայով զրույց: Նպատակն է իրազեկել աշակերտներին անվտանգ իրավիճակների հետ:	05.09.2023	աշակերտ, դասղեկ, ՆԶՊ ուս.
2	Զրույց «Ուսումնառության ներքին կարգապահական կանոնները» թեմայով: Նպատակը աշակերտներին ծանոթացնել ուսումնառության, աշակերտական էթիկայի կանոններին, ռեժիմին, ձևավորել կարգապահական պատասխանատվություն:	12.09	աշակերտ, դասղեկ
3	«ՀՀ խորհրդանիշներ, անկախության ուղին» թեմայով զրույց: Նպատակն է աշակերտներին ներկայացնել ՀՀ անկախության ձևավորման ուղին:	19.09	աշակերտ, դասղեկ
4	«Հանդուրժողականություն» թեմայով զրույց:Նպատակն է, որ աշակերտները կարողանան բնութագրել հանդուրժո-ղական մարդուն և հանդուրժողական մոտեցում ցուցա-բերեն:	26.09	աշակերտ, դասղեկ
5	«Մեդիագրագիտության կարևորությունը 21-րդ դարում» թեմայով զրույց: Նպատակն է աշակերտներին ծանոթացնել մեդիագրագիտության՝ միջազգայնորեն ընդունված հինգ հիմնահարցերին:	03.10	աշակերտ, դասղեկ
6	«Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) շարժիչ ուժը՝ պահանջարկը» թեմայով զրույց: Աշակերտներին իրազեկել մարդկանց շահագործման մասին, աճը և հետևանքները մեղմացնելու, կանխելու նպատակով:	10.10	աշակերտ, դասղեկ, հոգեբան
7	«Կոնֆլիկտների առաջացման պատճառները» թեմայով զրույց: Նպատակը՝ աշակերտներին ծանոթացնել կոնֆլիկ տների առաջացման պատճառների հետ:	17.10	աշակերտ, դասղեկ

8	«Աշակերտների առցանց անվտանգության ապահովումը» թեմայով զրույց: Նպատակը՝ ծանոթացնել աշակերտներին կայքերի և անձնական հաշիվների պաշտպանություն:	31.10	աշակերտ, դասղեկ
9	«Համացանցի միջոցով թրաֆիքինգի զոհերի հավաքագրում» թեմայով զրույց: Նպատակն է՝ իրազեկել աշակերտներին խարդախության զոհ չդառնալ համացանցում:	07.11	աշակերտ, դասղեկ
10	«Երիտասարդները որպես մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ռիսկային խումբ» թեմայով զրույց: Նպատակը՝ տեղեկացնել, որ մարդկանց շահագործման ռիսկային խմբի մեջ մտնում են երիտասարդներ, դպրոցական հասակի երեխաներ:	14.11	աշակերտ, դասղեկ
11	«Կոնֆլիկտի լուծման հնարավոր ելքերը» թեմայով զրույց: Նպատակը՝ աշակերտներին իրազեկել կոնֆլիկտների հնարավոր ելքերի մասին, լսել կոնֆլիկտների լուծման կառուցողական ելքերի մասին կարծիքները:	21.11	աշակերտ, դասղեկ
12	«Դեկտեմբերի 1-ը ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի համաշխարհային պաշտպանության օր» թեմայով զրույց: Նպատակը իրազեկելով աշակերտներին, առողջ,գիտակից սերունդ դաստիարակել:	28.11	աշակերտ, դասղեկ

13	«Վարվելակերպի ճիշտ դրսևորումը կոնֆլիկտային իրավիճակներում» թեմայով զրույց: Նպատակը՝ աշակերտները կծանոթանան կոնֆլիկտային իրավիճակներում դրսևորող վարվելակերպի ոճերի հետ:	05.12	աշակերտ, դասղեկ
14	«Կոնֆլիկտների խաղաղ լուծման հմտություններ» թեմայով զրույց: Նպատակը՝ ծանոթացնել կոնֆլիկտների թեժացումը կանխարգելող սկզբունքների հետ :	12.12	աշակերտ, դասղեկ
15	«Խնդիրների համատեղ լուծում, որոշումների կայացում» թեմայով զրույց: Նպատակը՝ աշակերտների մոտ ձևավորել ընկերասիրություն և ինքնուրույնություն:	19.12	աշակերտ, դասղեկ
16	«Մշակույթի ձևավորմանն ուղղված գործնական աշխատանքները» թեմայով զրույց: Նպատակը՝ աշակերտը ծանոթանա խոսքային և ոչ խոսքային արդյունավետ հաղորդակցման սկզբունքներին,կկարևորեն ինքնատիրապետումը, ինքզարգացումը և հետևողականությունը:	09.01	աշակերտ, դասղեկ,
17	«Մասնագիտության ճիշտ կողմնորոշում» թեմայով զրույց: Նպատակը աշակերտներին օգնել ճիշտ կողմնորոշվելու մասնագիտության ընտրության հարցում:	16.01	աշակերտ, դասղեկ

18	«Հայոց բանակը 31 տարեկան է» թեմայով զրույց: Նպատակը ռազմա-հայրենասիրական դաստիարակության զարգացում: Ծանոթանան բանակի անցած փառավոր ուղու հետ:	23.01	աշակերտ, դասղեկ, ՆԶՊ ուս.
19	«Մեդիագրագիտություն» թեմայով զրույց: Նպատակը՝ իրազեկել աշակերտներին մեդիայի օգնությամբ բարձրաձայնել խնդիրներ և լուծումներ գտնել:	30.12	աշակերտ, դասղեկ
20	«Մարդկանց շահագործումը(թրաֆիքինգը) որպես կազմակեպված հացավորություն» թեմայով զրույց: Նպա տակը՝ տեղեկացնել, որ մարդկանց շահագործումը կարող է հանգեցնել անդրազգային կազմակերպված հանցագոր ծություն:	06.02	աշակերտ, դասղեկ
21	«Եկեղեցու դերը ազգապահպանման գործում» թեմայով զրույց: Քննարկման միջոցով աշակերտների մոտ հիմնավորել եկեղեցու դերը հայ իրականության և հայ ժողովրդի կյանքում:	13.02	աշակերտ, դասղեկ, ՀԵՊ ուս.
22	«Մասնագիտական կողմնորոշում» թեմայով զրույց: Նպա տակը՝ հանրակրթության ոլորտում մասնագիտական կողմնորոշման ծառայությունների մոդելի նպատակը, խնդիրները, սկզբունքները:	20.02	աշակերտ, դասղեկ
23	«Սոցիալական ցանցեր» թեմայով զրույց: Նպատակը՝ աշա կերտներին ծանոթացնել սոցցանցերի առավելությունների և թերությունների հետ:	27.02	աշակերտ, դասղեկ
24	«Գնահատել մարդկանց թրաֆիքինգի պատճառները»թեմա յով զրույց: Նպատակը՝ իրազեկել աշակերտներին սեռային անհավասարությունը որպես մարդկանց թրաֆիքինգի պատճառ:	05.03	աշակերտ, դասղեկ
25	«Արդար, ազնիվ, օրինապահ քաղաքացի» թեմայով զրույց: Նպատակը՝ արդարության, ազնվության, կարգապահության դաստիարակության ձևավորում:	12.03	աշակերտ, դասղեկ
26	«Մարդը և հասարակությունը» թեմայով զրույց: Նպատակը՝ անհատի դրսևորումը հասարակության մեջ:	19.03	աշակերտ դասղեկ,

27	«Կոնֆլիկտների հաղթահարում» թեմայով զրույց: Նպատա կը՝ համերաշխ կոլեկտիվի ձևավորել:	02.04	աշակերտ, դասղեկ
28	«Մեդիագրագիտություն» թեմայով զրույց: Նպատակը՝ իրազեկել աշակերտներին մեդիագրագետ լինել պատե ռազմական իրավիճակներում:	09.04	աշակերտ, դասղեկ
29	«Ընտանիքի դերը սեռային ինքնգիտակցության ձևավոր ման գործում» թեմայով զրույց: Նպատակը՝ սեռային դաս տիարակության գործում ընտանիքի դերը, նշանակությունը:	16.04	աշակերտ, դասղեկ
30	«Հայոց Մեծ եղեռն» թեմայով զրույց: Աշակերտներին ծանո թացնել ցեղասպանության պատմության հետ: Նրանց մոտ սերմանել հայրենասիրություն:	23.04	աշակերտ, դասղեկ
31	«Առցանց անվտանգություն պատերազմական իրավի ճակում» թեմայով զրույց: Նպատակն է աշակերտներին իրազեկել պատերազմական իրավիճակներում անվտանգ օգտվել համացանցից:	30.04	աշակերտ, դասղեկ
32	Վերջին դասի նախապատրաստական աշխատանքներ:	07.05	աշակերտ, դասղեկ
33	«Իմ իրավունքները և պարտականությունները» թեմայով զը րույց: Նպատակը՝ հստակեցնել աշակերտների մոտ իրենց իրավունքները և պարտականությունները:	14.05	աշակերտ, դասղեկ
34	2022-2023 ուստարվա արդյունքների ամփոփում:	21.05	աշակերտ, դասղեկ